ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքաշինական եւ տարածական պլանավորման ոլորտում ՀՀ համայնքներին տեխնիկական խորհրդատվության եւ օժանդակության տրամադրման մասնագիտական աջակցության

6. Դասախոսություն 6

Գոյություն ունեցող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ապահովում

Շենքերի և կառուցվածքների տեխնիկական վիճակի հետազննության նպատակն է ձեռք բերել տվայլներ.

1. **տեխնիկական վիճակի գնահատման համար,**
2. **գործող նորմերի պահանջներին համապատասխանության որոշման համար,**
3. **վերակառուցման նպատակահարմարության որոշման կայացման համար,**
4. **վերակառուցման մակարդակի նախանշման և իրականացման լավագույն եղանակի ընտրության համար:**

Շենեքրի և կառուցվածքների տեխնիկական վիճակի հետազննության ձևերն են.

1. **դիտողական,**
2. **դիտողագործիքային:**

Դիտողական հետազննության ժամանակ ի հայտ են բերվում և նշվում են (անհրաժեշտության դեպքում լուսանկարվում են) երևացող թերությունները, դեֆորմացիաները, կոնստրուկցիաների տարրերի չափերի, ձևի ու դիրքի շեղումները, ճաքերի առկայությունն ու տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև մեխանիկական, կոռոզիոն, կենսաբանական, այրվածքային և այլ տիպի վնասվածքները:

6. Դասախոսություն 6

Գոյություն ունեցող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ապահովում

Դիտողագործիքային հետազննության ժամանակ, բացի դիտողական հետազննության ժամանակ կատարվող աշխատանքներից՝ իրականացվում են նաև.

1. նստվածքների, ճկվածքների, ուղղաձիգ շեղումների, հենարանային հարթակների տեղափոխությունների և այլ չափումներ,
2. ճաքերի բացվածքի լայնության չափումներ,
3. կոնստրուկցիաների նյութերի ամրության որոշում,
4. բետոնի, ամրանների և մետաղե կոնստրուկցիաների կոռոզիոն վնասվածության, ինչպես նաև փայտե կոնստրուկցիաների կենսաբանական վնասվածության գնահատում

Տեխնիկական վիճակի հետազննության արդյունքում կազմվում է շենքի կամ կառուցվածքի վերակառուցման, վերականգնման, սեյսմազինվածության բարձրացման, ուժեղացման, հիմնական կամ ընթացիկ նորոգման համար հիմք հանդիսացող համապատասխան եզրակացություն՝ հետևյալ նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների հաշվառմամբ.

6. Դասախոսություն 6
Գոյություն ունեցող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության ապահովում

1. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանով հաստատված «Հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումներ»,

2. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 24-ի N 87-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. Հիմնական դրույթներ» շինարարական նորմերը» շինարարական նորմեր,

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամնով հաստատված ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմեր:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆ